

քեպ. Էջմիածնի Հում փախցուց, ինչպէս պիտի տեսնենք:

Քանի մը տարի ետքը Սարգիս Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին հաստատուեցաւ եւ հոն սկսաւ նորէն քարոզել: Այս միջոցին (1764ի սկիզբն) Յակոբ Պատրիարք, մահացու հիւանդ կը պառկէր Սկիւտարու Երուսաղեմեան վանքը, ուր Սարգիս Արքեպ. ստէպ կ'այցելէր, կը մխիթարէր, եւ զինք յաւիտենական կենաց կը պատրաստէր, անցեալ գործերը յիշեցընելով զղջման կը յորդորէր: Յառաջ կը բերէր այն գրքերը՝ զոր ընդդէմ ուղղափառութեան տպած էր, թէպէտ ինքն Յակոբ ալ ըրածնե-րուն վրայ գոհ չէր: Ասոր Յակոբ պատասխանեց թէ վերջին անգամ գիրք մ'ալ տպած է ժամամուտքի եւ աղօթքի վրայ (Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր, Կ.Պոլ. Տպ. Աստուածատուրի, 1760), որուն մէջ ուղղափառական շատ բան կայ: Ասոր Սարգիս պատասխանեց, թէ «ասոր մէջ կամքդ բացայայտ չէ, ինչպէս բացայայտ է ուղղափառաց դէմ գրածներուդ մէջ»: Սարգիս տեսնելով որ Յակոբ չ'ուզեր որ այլ եւս վրան խօսուի, լռեց:

Յակոբ զգալով որ հիւանդութիւնը կը սաստկանայ, ուրիշներուն խորհուրդին անսարով՝ ուզեց որ իր տեղ ուրիշ մը Պատրիարք ըլլայ: Առաջարկեց Սարգսին, որ հրաժարեցաւ եւ երգմամբ պնդեց որ բնաւ յանձն չ'առնուր: Այս մասին Սարգիս Գ Յունուար 1773ին Լիվոնոյէ կը գրէ առ Հ. Ռափայէլ Սուրբիասեան